



Փ Ա Ր Ո Ս *Paros*

ISSUE 68 MARCH / ԹԻԻ 68 ՄԱՐՏ 2023

NEWSLETTER OF THE DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND

ՄՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԶԱՏԿԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԸ ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ԵՒ ՆՈՐ ԶԵԼԱՆՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

*«Արթնցիր, դուն որ կը քնանաս, ու կանգնե՛ մեռելներէն,
եւ Քրիստոս պիտի լուսաւորե՛ քեզ»
Եփես. 5:14*

Ամբողջ աշխարհը պատերազմներու, աղէտներու, խռովութիւններու, տառապանքներու թոհ ու բոհի մէջէն կ'անցնի: Աշխարհասփիւռ Հայ ժողովուրդն ալ, ոչ միայն կ'ենթարկուի այս բոլորին այլ եւ յաւելեալ իր խաչի եւ տառապանքի բաժինն ունի՝ 2020-ի Արցախեան կորուստներով, Հայաստանի գրաւեալ մասերով եւ Լաչինի միջանցքի շրջափակումով:

Վերջերս, Պատմական Հայաստանի, Կիլիկիոյ տարածքներուն եւ Սուրիոյ մէջ տեղի ունեցած երկրաշարժը, թէեւ մարդկային շատ զոհեր չխլեց մեր ազգի զաւակներէն, սակայն մշակութային եւ պատմական շինութիւններու աւերումը անդառնալի է մեր պատմական հողերուն վրայ, իսկ Հալէպի ահաւոր վիճակը հարցականի տակ կը դնէ այդ փառաւոր գաղութին ապագան:

Քրիստոսի հրաշափառ Յարութիւնը մեր Տիրոջ կեանքի թագապսակը եղաւ: Ան խաչով մահն ու չարիքը պարտութեան մատնեց, կորով ներշնչեց բոլոր տառապեալներուն, յոյս՝ մերժուածներուն եւ լոյս՝ խաւարի մէջ խարխափողներուն:

Այսօր, հին Քրիստոնէայ աշխարհը շեղած է իր հիմնական ճանապարհէն. եթէ հակաքրիստոնէայ չէ, առնուազն անտարբեր է բոլոր այն բարոյական արժեքներուն նկատմամբ, որոնց միջոցաւ մեր Տէրը փորձեց մարդը կանգնեցնել իր անկեալ վիճակէն եւ մօտեցնել կատարելութեան իր Աստուծոյ:

Կ'ապրինք աշխարհի մը մէջ, ուր ստութիւնը արուեստ է, գողութիւնը՝ ճարպիկութիւն, սէրը՝ մարդոց շուրթերուն եւ ոչ սիրտերուն մէջ. նիւթն ու փառքը կը պաշտուին, որոնց հասնելու համար ամէն ինչ ոտքի տակ կ'անուրի...: Ընտանիքներ կը քայքայուին, երեխաներ թիրախ են ամէն տեսակ չարիքի. թմրամոլութիւն, բախտախաղի եւ խմիչքի մոլութիւն, սեռային սանձարձակութիւն... Այս բոլորը մեզի Սողոմ Գոմորը կը յիշեցնեն եւ մենք գիտենք անոնց վախճանը: Մարդկութիւնը թաւազլոր դէպի ինքնակործանում կը սլանայ այս ընթացքով:

Մենք, որպէս Քրիստոնէաներ, կատարելի պարտականութիւն ունինք մեր սիրելիներուն բարոյական եւ հոգեւոր կեանքին նկատմամբ, նաեւ մեր որդեգրած այս երկիրներուն՝ Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի ապագային նկատմամբ, ուր մեր գալիք սերունդները պիտի ապրին: Հետեւաբար, մէկ կողմ դնենք




անտարբերությունը, անդրադառնանք մեր անցեալի հաւատքի ճանապարհին, որուն համար եղան այնքան մեծ զոհողություններ, 60 եւ ավելի տարիներ առաջ երբ մեր նախնիքը այս երկիրները ընտրեցին եւ հաստատուեցան հոն՝ պատճառներէն մէկը այս երկրի քրիստոնէական դիմագիծն էր, ինչ որ խեղաթիւրուած է այսօր: Սակայն մենք տեղի պէտք չէ տանք, հարկ է պատերազմիլ չարին դէմ: Որպէս լոյսի զաւակներ, քաջաբար ոտքի՝ կանգնինք, առնենք Աստուծոյ սպառնալիությունը, որպէսզի կարողանանք դէմ կանգնիլ չարին: «Կանգնինք մեր մէջքերը գօտեպնդած ճշմարտութեամբ, հազած արդարութեան զրահը, մեր ոտքերը ամրացուցած Աւետարանի խաղաղութեան պատրաստութեամբ. առնենք խաղաղութեան վահանը, որով պիտի հանգցնենք չարին բոլոր միացող նետերը, առնենք փրկութեան սաղաւարտն ու Հոգիին սուսերը, որ Աստուծոյ խօսքն է, (Եփես. 6:14-17) եւ վստահ ըլլանք որ մեր ճանապարհի աւարտին յարուցեալ Քրիստոս իր փառքի լոյսով պիտի դիմաւորէ մեզ:

*«Փութաջանութեան մէջ ծոյլ մի ըլլաք... տառպանքի մէջ համբերեցէք. աղօթքի մէջ յարատեւեցէք... »
(Հռոմ 12: 11).*

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ Ի ՄԵՌԵԼՈՅ

Օրհնութեամբ՝



Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեան,
Առաջնորդ

ԹԵՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ուրբ. 3 Մարտ – Ընկերակցութեամբ Թեմական Խորհուրդի ատենապետ եւ փոխատենապետ Տիարք Սարգիս Տէր Պետրոսեանի եւ Ստեփան Գրգեաշարեանի, Առաջնորդ Սրբազան Հայր Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արք. Նաճարեան այցելեց Սուրբ Երրորդութիւն եկեղեցի, ուր տեղի ունեցաւ հանդիպում մը Փրոսփէքթի նահանգային ներկայացուցիչ երեսփոխան Պրն Հիւ Սքթերմոթի հետ: Պարոն Սքթերմոթ ճաշի հիւրը եղաւ եկեղեցւոյ Ծխական Խորհուրդին եւ հոգեւոր հովիւ՝ Արժ Տէր Միւռն Քահանայ Աւետիսեանին: Ձերմ մթնոլորտի մէջ տեղի ունեցաւ մտերմիկ խօսակցութիւն: Հիւրընկալները եւ թեմականի անդամները իրենց խնդրանքները ներկայացուցին Պրն Սքթերմոթին: Վերջինս խոստացաւ օգտակար դառնալ նահանգային ընտրութիւններէն ետք: Յայտնենք որ Պրն Երեսփոխանը մօտիկ է հայութեան, այցելած է Երեւան եւ Արցախ, մասնակցած է կազմակերպուած ցոյցերու եւ ջատագով է Աւստրալիոյ դաշնակցային կառավարութեան Հայոց Յեղասպանութեան ճանաչման: Սրբազան հայրը իր շնորհակալութիւնը յայտնեց Պարոն Ներկայացուցիչին եւ զինք հրաւիրեց այցելելու Առաջնորդարան:





Կիր., 5 Մարտ – Հայաստանեայց Առաքելական բոլոր եկեղեցիներուն մէջ, Հայաստան, Արցախի թէ՛ Սփիւռք, կարդացուեցաւ ՆՍՕՏՏ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Կոնդակը Ներսէս Շնորհալի Հայրապետի վախճանման 850-ամեակին առիթով: Սրբազան հօր ներկայութեան Սուրբ Յարութիւն եկեղեցոյ մէջ կոնդակը ընթերցուեցաւ Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի կողմէ: (Կոնդակի բովանդակութիւնը ընթերցել էջ 17):

ԲԶ., 6 Մարտ – Առաջնորդարանին մէջ Սրբազան հայրը ընդունեց Աւստրալիոյ ՄԴՀԿ, ՌԱԿ եւ ՀԲԸՄ-ի ատենապետեր՝ Տիարք Սեպուհ Գալփաքեան, Հայկ Լէփեճեան եւ Միհրան

Լէփեճեան: Հիւրերը խնդրեցին Սրբազան հօրմէն հովանաւորելու Ապրիլեան Եղեռնի 108րդ ամեակի ոգեկոչման հանդիսութիւնը կազմակերպուած երեք կազմակերպութիւններուն կողմէ: Այս առիթով հայրենիքէն հրաւիրուած է 21 Ապրիլին դասախօսելու Հանրապետութիւն կուսակցութեան նախագահ Պրն Արամ Սարգսեանը: Քննարկուեցան նաեւ Հայ ժողովուրդի դիմագրուած մարտահրաւերները յատկապէս Արցախի եւ Հայաստանի մէջ, ինչպէս նաեւ Աւստրալահայ գաղութը յուզող հարցեր:

ԳԶ., 7 Մարտ – Էտկարեան սրահի այդօրուան այցելուները խառն զգացումներ ունէին, յատկապէս Հայ Համայնքի Բարեկեցութեան Կեդրոնի (ՀՀԲԿ) մեծահասակ մեր պապիկներն ու մամիկները: Իրենցմէ պիտի բաժնուէր Կեդրոնի վերջին տարիներու խոհարարը Ճորճ Խուլումունեանը, իմա՝ Ճորճիկը: Իր տիկնոջ Նորային հետ տարիներ շարունակ նոյն ժրաջանութեամբ, դրական իրենց կեցուածքով, Ճորճիկն ու Նորան սիրելին դարձան բոլորին: Միշտ ժպտադէմ, անգանգատ, անոնք ծառայեցին Կեդրոնին որպէս տանտէր հարազատ: Մակայն կեանքի իւրաքանչիւր հանգրուան իր օրէնքները կը պարտադրէ մարդուն: Ճորճը յարմար գտաւ դադրիլ աշխատանքէ եւ այտուհետեւ ծանր աշխատանք չտանիլ, ենթարկուելով բնութեան օրէնքին:



Այս առիթով, Սրբազան հայրը, Տէր Աւետիս, ՀՀԲԿ-ի անցեալի եւ ներկայ անձնակազմի անդամները, Սուրբ Յարութիւն եկեղեցոյ եւ Առաջնորդարանի պաշտօնէութիւնը եւ մեր մեծահասակները իրենց երախտագիտական զգացումները փոխանցեցին Խուլումունեան ամուլին: Սրբազան հայրը բարձր գնահատեց Ճորճին ու Նորային տարած տարիներու անկեղծ գործակցութիւնը եւ անոնց յանձնեց գնահատագրեր պատրաստուած ՀՀԲԿ-ի տնօրինութեան կողմէ:



Փարոսի խմբագրութիւնը առողջութիւն եւ յաջողութիւն կը մաղթէ Ճորճին եւ Նորային:

Գշ., 14 Մարտ – Սրբազան հայրը նախագահեց Թեմական Խորհուրդի հերթական ժողովին: Խորհուրդը իր կողքին նշանակած է երկու դիտորդներ, յանձինս Տիարք Յովիկ Պարսումեանի (Սիտնի) եւ Գեորգ Գողգեանի (Մելպուրն): Այս ժողովներուն կարճ ժամանակով առցանց կը մասնակցին նաեւ Ծուխերու հոգեւոր հովիւները եւ ծխական խորհուրդներու ատենապետերը: Անոնք կը զեկուցեն իրենց տարած գործունէութեան մասին եւ կը տեղեկանան Առաջնորդարանի տարած միամսեայ աշխատանքին: Այս դրութիւնը իրարու կը մօտեցնէ ծուխերը, նաեւ առիթ կու տայ որ անոնք արծարծեն ծուխերուն վերաբերող հարցեր եւ միասնական ջանքերով որոնուին լուծումներ:

Ժողովը զբաղեցաւ զանազան անմիջական եւ երկարժամկետ հարցերով ու ծրագիրներով, որոնց կարգին Շնորհալիի 850-ամեակի յոբելեանական հանդիսութիւններ, Թեմական Պատգամաւորական Ժողովի տեղեկագիր, Լսարանական ձեռնարկներ եւայլն: Ժողովը լսեց եւ վաւերացուց ատենագրութիւնը եւ հաշուական տեղեկագիրը:



Շբ., 18 Մարտ – Ընկերակցութեամբ Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, Սրբազան հայրը ներկայ եղաւ Համազգային Սիտնի Հայկական Պարի Ասամպլի երեք պարողներու տարեկան համոյթին Պելրոզի Glen Street Theatre-ի մէջ:

Սիտնի Պարի Ասամպլը հիմնուած է 2000 թուականին, նոր սերունդին մէջ վառ պահելու համար իրենց ժառանգ մնացած ՀԱՅ պարը, որ կենսական է մեր երիտասարդութեան իրենց ինքնութիւնը ամրապնդելու գործընթացին համար: Այնուհետեւ պարախումբը բազում ելոյթներ ունեցած է իր կրտսերներու թէ երեցներու խումբերով, Աւստրալիոյ մէջ թէ դուրս, եւ արձանագրած մեծ յաջողութիւն:

Երկու ելոյթներուն մասնակցեցան մօտ 250 պարման-պարմանուհիներ, մանուկներ ու պատանիներ, ծափողջոյններ խլելով հանդիսատեսներէն:

Աւարտին՝ Սրբազան հայրը տուաւ իր պատգամը եւ սրտի խօսքը: Մեծ տպաւորութիւն թողած էր Սրբազնութեան վրայ այս համոյթը: Ան օրհնեց բոլոր մասնակիցները եւ տնօրինութիւնն ու քուլիսներու ետին աշխատող բոլոր կամաւոր աշխատողները ինչպէս նաեւ պարուսոյցները:

Նախքան երեցներու համոյթը, տեղի ունեցաւ կրտսերներու համոյթ, որուն ներկայ եղաւ Արժ Տէր Պարթեւ Քահանայ Գարագաշեանը: Երկու ելոյթներուն մէջ զգալի էր տարազներու ճոխութիւնը եւ պարողներու ճկունութիւնը, որ արդիւնք է անշուշտ պարուսոյցներու տքնաջան աշխատանքին: Տէր Պարթեւ, նախքան Պահպանիչով փակելը, իր սրտի խօսքին մէջ, իր յատուկ հիւմուրով ըսաւ. «Ես աւելի ուրախ եմ քան դուք ծնողներ, որովհետեւ այս երեխաներուն մեծամասնութիւնը եւ մկրտած եմ...»:

Գնահատանքի արժանի է Համազգայինի Սիտնի Պարի Ասամպլը:



Կիր., 19 Մարտ – Գեղեցիկ արանդութիւնը կը շարունակուի...

Սուրբ Յարութիւն եկեղեցույ մէջ, օրհնելէ ետք զանոնք, Սրբազան հայրը եւ թեմական խորհուրդի

ատենապետ Պրն Սարգիս Տեր Պետրոսեան, Փոխատենապետ Պրն Ստեփան Գրգեաշարեան եւ Ս.



Յարութին Եկեղեցոյ Ծխական Խորհուրդի ատենապետ Պրն Պետրոս Զօրլու հիւրընկալեցին 12րդ դասարանի Հայ աշակերտները, որոնցմէ երեք աշակերտներ, որոնք բացառիկ յաջողութիւն արձանագրած էին եւ բարձր նիշեր ապահոված 2022-ի HSC-ի քննութեանց մէջ: Մրցանակակիրներն են՝ Ճորճ Գլրճեան՝ շրջանաւարտ Թեմփէ Երկրորդական Վարժարանէն, Քիարա Թաշճեան՝ Մըրսի Կաթոլիկ Գոլէճէն եւ Վարդի Կարապետ՝ Համազգային Գօլստըն Ճեմարանէն:

Գեղեցիկ աւանդութիւնը, որուն ակնարկեցինք, հաստատուած է Սուրբ Յարութին Եկեղեցոյ կողմէ: Տարիներէ ի վեր յատկացուած են գնահատանքի պարգէներ հայկական թէ ոչ

հայկական վարժարաններէ 12րդ դասարանի լաւագոյն արդիւնքներ ապահոված Հայ աշակերտներուն: Այս նիւթական պարգէները ունին իրենց նուիրատու հովանաւորները:

Հետեւեալ մրցանակները տրուեցան.

Ճորճ Գլրճեան եւ Քիարա Թաշճեան պարգևատրուեցան Top-Ranking HSC All-Round Achiever in 2022 պարգևով: Այս կը նշանակէ թէ Ճորճ եւ Քիարա կարողացած են 100-ի վրայ 90 եւ ավելի նիշ ապահովել իւրաքանչիւր նիւթի, որուն մէջ քննութիւն տուած են: Այս պարգևատրումը կը հովանաւորեն եւ նուիրատուներն են Տոքթօր եւ Տիկին Յարութին եւ Մարօ Ճէպլէճեան: Նուիրուած գումար՝ 1000-ական Ա.Սոլար: Նուէրները յանձնեց Տոքթօր Ճէպլէճեան:

Վարդի Կարապետ արժանացաւ Top-Ranking Student of HSC Armenian in 2022-ի պարգևին, ինչ որ կը նշանակէ թէ Վարդին բարձրագոյն նիշը ապահոված է Նիւ Սաութ Ուելլզի բոլոր Հայ աշակերտներուն մէջ, որոնք Հայերէնը ընտրած են որպէս քննութեան նիւթ: Այս նուէրը կը հովանաւորուի Levon Shohmelian Endowment Fund-ին կողմէ, ի յիշատակ հանգուցեալ Լեւոն Շէօհմէլեանին, որուն համար մեծարժէք էին Հայերէն լեզուի ուսուցումն ու զայն սորվիլը: Նուիրուած գումար՝ 1000 Ա.Սոլար: Նուէրը յանձնուեցաւ Տոքթօր Կարօ Արթինեանի կողմէ ներկայացնելով Լեւոն Շէօհմէլեանի այրին՝ Տիկին Մարի Շէօհմէլեանն ու իր ընտանիքը:

Պարգևատրուողները նաեւ ստացան գնահատագրեր Սուրբ Յարութին Եկեղեցոյ կողմէ:



Տոքթօր Յարութին Ճէպլէճեան արտասանեց իր սրտի խօսքը եւ Նարեկացիի «Մատեան Ողբերգութեան» գիրքը, իմա՝ Նարեկ, նուիրեց ներկայ բոլոր աշակերտներուն:

Իր եզրափակիչ խօսքին մէջ Սրբազան հայրը, շնորհաւորելէ ետք պարգևատրուողները, անոնց ծնողները, գիտակից նուիրատուները, իր խօսքը ուղղեց աշակերտներուն ըսելով. «Ձեր ծնողները ձեզ

մեծցնելու համար մեծ զոհողություն կատարեցին եւ ձեզի տուին բարձր եւ որակաւոր ուսում ստանալու առիթ: Այժմ, ձեր կարգն է ձեր լաւագոյնը ընելու ընտրելու ձեր ուղին փայլուն ապագայի մը համար»: Տեղի ունեցաւ թեթեւ հիւրասիրութիւն Առաջնորդարանի Տիկնանց Յանձնախումբին կողմէ: Փարոսի խմբագրութիւնը կը շնորհատրեւ պարգեւատրուողներն ու պարգեւատուները ինչպէս նաեւ Ս. Յարութիւն Եկեղեցոյ Ծխական Խորհուրդը այս գեղեցիկ միջոցառման առթիւ:

Կիր 26 Մարտ – Թեմական Խորհուրդի անդամներ, ատենապետ՝ Պրն Սարգիս Տէր Պետրոսեան, փոխատենապետ՝ Պրն Ստեփան Գրգեաշարեան եւ Պրն Գեորգ Զափրագեան, իրենց տիկիններով, մասնակցեցան Աւստրալիոյ Հայ Աւետարանչական Ընկերակցութեան տարեկան ճաշկերոյթին: Գալուցիայի Արքեպիսկոպոս Սիտնի ժամանած էր Արքեպիսկոպոս Հայ Աւետարանչական Ընկերակցութեան գործադիր Տնօրէն Պրն Վիքթոր Կարապետեան: Տեղի ունեցաւ դրամահաւաք յօգուտ Արքեպիսկոպոս Հայ Աւետարանչական Ընկերակցութեան գործադիր տնօրէն Վերապատուելի Եումուշաքեան ներկայացուց ընկերակցութեան միամեայ գործունէութիւնը: Պրն Կարապետեան, իր տասնօրեայ Սիտնի կեցութեան շրջանին, ընկերակցութեամբ Վերապատուելի Գրիգոր Եումուշաքեանի, երկու այցելութիւն տուաւ Առաջնորդարան, հանդիպում ունեցաւ Սրբազան հօր հետ, տեղեկացուց Արքեպիսկոպոս մէջ տիրող կացութեան եւ ձեռք առնուած միջոցներուն մասին: Կիրակի 26 Մարտին, դարձեալ Վերապատուելիին ընկերակցութեամբ, Պրն Կարապետեան մասնակցեցաւ Արեւազալի արարողութեան: Արքեպիսկոպոս հիւրը հանգամանօրէն արարողութեան մասնակիցներուն ներկայացուցեցաւ Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի կողմէ: Յայտնենք, որ Պրն Կարապետեան մասնակցեցաւ նաեւ երկու յաջող ֆորումներու, մին՝ Մելպուրն, միւսը՝ Սիտնի, կազմակերպուած Վերապատուելիի գլխաւորած վարչութեան կողմէ: Ան նաեւ երկու քաղաքներուն մէջ հանդիպում ունեցաւ ժողովուրդին հետ:



Կիր 26 Մարտ., - Աւանդութիւն դարձած ՀԲԸՄ Ալեքսանտր Վարժարանի զատկական բացօթեայ հանդէպ տեղի ունեցաւ կէսօրին եւ տւեց մինչեւ ուշ կէսօրէ ետք: Սրբազան հայրը կամքէ անկախ պատճառներով չկարողացաւ մասնակցիլ, զինք ներկայացուցին Արժ Տէր Նորայր Աւագ Քահանայ Բաթանեանն ու Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանը: Ինչպէս միշտ, Տիկին Սեդա Քեօշքերեանի նախաձեռնութեամբ, աշակերտները պատրաստած էին տպաւորիչ գեղարուեստական յայտագիր մը, որ մեծապէս գնահատուցաւ խումբերամ բազմութեան կողմէ: Երգ, պար, արտասանութիւն, թատրոն: Ասոնց կողքին տեղի ունեցաւ նաեւ սովորութիւն դարձած գլխարկներու ցուցադրութիւնը: Աւարտին, Տէր Նորայր իր սրտի խօսքին մէջ բարձր գնահատեց ձեռնարկը կազմակերպողները, Վարժարանի տնօրէնութիւնը եւ իր օրհնութիւնը բաշխեց աշակերտութեան: Տէր հօր Պահպանիչով վերջ գտաւ հանդիսութիւնը:



Կիր., 26 Մարտ – Ընկերակցութեամբ Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, Առաջնորդարանին մէջ, Սրբազան հայրը մասնակցեցաւ Ս. Յարութիւն Եկեղեցոյ Երիտասարդական Միութեան կազմակերպած Սուրբ Գրոց սերտողութեան: Նիստը վարեց եւ նիւթը *փառլոր փոյնթ* սահիկներով ներկայացուց Միութեան ատենապետ Միհրան Սարգիսեան: Յարութեան թեմայով «Ղազարոսի Յարութիւնը» նիւթը պատրաստած էին Ալին Եափուճեան եւ Միհրան Սարգիսեան: Ներկայ էին 12 երիտասարդ երիտասարդուհիներ, որոնք հետաքրքրութեամբ քննարկեցին խնամքով պատրաստուած ներկայացումը: Իրենց սրտի եւ քաջակերանքի խօսքերը արտասանեցին Սրբազան հայրն ու Արժանապատիւ Տէր Հայրը: Սրբազան հօր եւ Թեմական Խորհուրդին համար մեծ ուրախութիւն է տեսնել




Աւստրալիոյ երեք եկեղեցիներու շուրջ բոլորուած երիտասարդութեան մէջ լուրջ հետաքրքրութիւն հոգեւոր հարցերու: Գնահատելի է հոգեւոր հովիւներու եւ ծխական խորհուրդներու այս ուղղութեամբ տարած աշխատանքը:

Գշ., 28 Մարտ – Ընկերակցութեամբ Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, Սրբազան հայրը ներկայ գտնուեցաւ Սիտնիի ՀԲԸՄի վարչութեան կողմէ կազմակերպուած դասախօսական երեկոյին, որ տեղի ունեցաւ միութեան Նիւթըրլ Պէյի ակումբի սրահին մէջ: Դասախօս՝ Դոկտ Վահագն Վարդանեան, Հոնկ Բոնկի ՀԱՆ Ակադեմիայի Տնօրէն եւ հեղինակ «National Identity, Diaspora, and Space of Belonging» գիրքին (տպուած Լոնտոն 2021-ին):

Քննարկուեցան գիրքին մէջ գիտական մօտեցումով վերլուծուած կարգ մը հարցեր, ինչպէս՝ ո՞րն է ազգային ինքնութեան գլխաւոր առանցքը, ինչ կը նշանակէ պատկանելութեան տարածք, իւրաքանչիւրին զգացական կապուածութիւնը ինքնութեան հասկացողութեան մէջ, աշխարհացրիւ հայութիւնը, բազմազանութեամբ հարուստ, ինչպէ՞ս կարելի է իրարու կամրջել, ի՞նչ միջոցներու դիմել, եւ նման այժմեական խոր հարցեր: Նմանօրինակ էական հարցեր քննարկուած են Դոկտ Վարդանեանի վերոնշեալ գիրքին մէջ ծաւալուն կերպով:

Զեռնարկի աւարտին, Սրբազան հայրը կատարեց իր սրտի խօսքը եւ անոր աղօթքով փակուեցաւ հանդիսութիւնը:



Դշ., 29 Մարտ – Լսարանական անցանց դասախօսութեանց երրորդ տարին թեւակոխած ենք արդէն: Մեր այսօրուան դասախօսն էր Հոգեշնորհ Տէր Սովսէ Վարդապետ Սարգսեանը, Հոգեւոր Առաջնորդ Հայաստանի Հանրապետութեան (ՀՀ) Բանակին, նիւթ՝ «Հոգեւոր Առաջնորդութիւնը ՀՀ Բանակին՝ Մէջ»: Զեռնարկին նախագահեց Սրբազան հայրը: Հանդիսավար՝ Դիւանապետ Նշան Սարկաւազ Պասմաճեան:

Սրբազան հօր բացման աղօթքէն ետք հանդիսավարը ներկայացուց Հայր սուրբը, որուն ամփոփ պատկերը կը ներկայացնենք ստորեւ.

Սովսէ վարդապետ Սարգսեանը ծնած է 1984-ին:

2002-2008- ուսանող Էջմիածնի Գեորգեան Հոգևոր Ճեմարան:

2006-ին կը ձեռնադրուի սարկաւագ:

2008-ին կը գրէ իր աւարտաճառը, նիւթ՝ «Մերոյ սարկաւագ Թաղիաղյանի կեանքը, մատենագրութիւնը և բարոյագիտութիւնը»:

2009 ի Մայիսին, Վեհափառ Հօր կողմէ կը նշանակուի զօրամասի գնդերէց Արցախի Պաշտպանութեան Բանակին (ԱՊԲ) մէջ:

2010- Հոկտեմբերին կը ձեռնադրուի կուսակրօն քահանայ:

2012-ին կը նշանակուի աւագ գնդերէց ԱՊԲի մէջ, ապա՝ փոխառաջնորդ:

2014-ին ուսումը կը շարունակէ ԱՄՆի Ֆորթ Ճաքսընի Բանակային Գիտելիքներու հիմնարկին մէջ:


2015-ին, հինգ ամիսով Լոնտոնի Ս. Եղիշէ եկեղեցւոյ հոգևոր հովիւ:

2016 – 2020 - Հնդկահայոց հոգևոր հովիւ և Կալկաթայի Հայոց Մարդասիրական Ճեմարանի կառավարիչ եւ Միանմարի ու Սինկափուրի հայ համայնքներու այցելու հովիւ:

2018 դեկտեմբերին կը պաշտպանէ վարդապետական թեզ՝ «Արդարացի պատերազմի տեսութիւնը» վերնագրով եւ նոյն ամսուան 6-ին կը ձեռնադրուի վարդապետ:

2021 Փետրուարէն ցայսօր կը վարէ ՀՀ Զինեալ Ուժերու հոգևոր առաջնորդութիւնը փոխարինելով Վրթանէս Սրբազանը:

Հայր սուրբը, 2023-ի Փետրուարին, այցելեց Աւստրալիա:



Արիւսոսիցս Բաեանս Աւոնց երեցը հօգևոր իր դասի կես պայտարուն էր համուն հովաթի և համուն հայրենիի:
Աւոնց երեցն իր իբրախուրյամբ և նահատակութեամբ դարձաւ բանակում ծառայող հօգևորականի իբրեւ



1997 թ. հոյեմբերի 13-ին հաշտագիր է ստորագրուում և սկիզբ առնում բանակում հոգևորականների ծառայության պաշտօնական կողմին

Հայր Սուրբը բացատրեց թէ պատմական իրողութիւն է որ Վարդանանց օրերէն մեր բանակներուն իւրաքանչիւր գունդ ունեցած է իր երէցը (հոգևոր հայր): Տուաւ օրինակներ, որոնց ամենէն ցայտուն օրինակներէն է Գեորգ Զ. Չորէքճեան Կաթողիկոսի հանգանակութիւն կազմակերպելը «Սասունցի Դաւիթ» շարասիւնը կազմելու համար մասնակցելու Հայրենական Պատերազմին (1941-1945): Արցախեան պատերազմին ալ կը մասնակցէին հոգևորականներ:

13 Նոյեմբեր 1997-ին, նախաձեռնութեամբ ՆՍՕՏՏ Գարեգին Սարգիսեան (Գարեգին Ա.) Ամենայն Հայոց կաթողիկոսին, օրուան Պաշտպանութեան Նախարար սպարապետ Վազգէն Սարգիսեանի եւ Կաթողիկոսին միջեւ կնքուեցաւ համաձայնագիր ստեղծելու Բանակի Հոգևոր Առաջնորդութիւնը: Առաջնորդ նշանակուեցաւ Վրթանէս Վարդապետ Արքահամեանը (այսօրուան Արցախի Թեմին Առաջնորդը): Միեւնոյն ատեն Աշոտ Երկաթի Խաչը ընդունուեցաւ որպէս Հայոց Բանակի Պահապան Սրբութիւն եւ դրօշ, որուն վրայ գրուած է «Զի Աստուած



Ընդ Մեզ Է» (Աստուած մեզ հետ է):

Ամէն տարի Առաջնորդը կը ներկայացնէ իր ծրագիրը Պաշտպանութեան Նախարարութեան, առ ի վաւերացում:

Բանակին մէջ գնդերէցները կը կատարեն բազմակողմանի ծխական արարողութիւններ, ամէն տարի 10,000 յատուկ, ռազմականօրէն ծպտուած (camouflage) Նոր Կտակարաններ կը տպուին եւ կը բաժնուին զինուորներուն: (այդ Նոր Կտակարաններէն մի քանի հատ իր հետ բերած է Հայր Սուրբը իր Միտնի այցելութեան ատեն): Այս Կտակարանները շատ պահանջուած են զինուորներուն կողմէ, զորս կը պահեն իրենց ծոցերու գրպաններուն մէջ:



Կառուցում են մատուռներ և եկեղեցիներ ինչպես գործառնաբար, այնպես էլ մարտական հենակներում



Ամեն տարի զինվորական կազմով Նոր Կապուցաններ են քառմեկում զինծառայողներին



Մարտի զատուած գեղեցիկները կատարում էին մկրտության արարողություններ

Զորամասերուն մէջ կը կառուցուին մատուռներ, զինուորներու նախաձեռնութեամբ, կան մատուռներ որոնք կառուցուած են զինուորներու ձեռքով:

Ամէն եռամիս, գնդերէցներու ժողովին, հաշուետուութիւն կը տրուի, իսկ Առաջնորդը ընդհանուր հաշուետուութիւն կու տայ զլիաւոր շտապի պետին: Գնդերէցները պատասխանատու են զորամասին մէջ գործող Աւագ Գնդերէցին:

Բանակի Օրը, 28 Յունուար, ամէն տարի Ս. Էջմիածնի մէջ տեղի կ'ունենայ Պատարագ, կ'օրհնուին սպաներն ու զինուորները եւ կը պարգեւատրուին ըստ արժանւոյն:

Առաջնորդութիւնը կը կազմակերպէ պարբերական ուխտագնացութիւններ դէպի Սուրբ Էջմիածին:

Արցախեան 44-օրեայ պատերազմին, 2020, սխարանքներ կատարեցին գնդերէցները, բայց այս անգամ որպէս ռազմական գործէ հասկցողներ, ոչ միայն որպէս պարզ հոգեւորականներ: Ամէն գնդերէց իր դերը ունի, այդ ըլլայ խաղաղ օրերուն թէպատերազմի ընթացքին: Ինք միշտ ներկայ է: 44-օրեայ պատերազմին այլ Հայ հոգեւորականներ ալ բանակ ղրկուեցան (Մայր Աթոռէն, Արցախի Առաջնորդարանէն, Սփիւռքէն, յատկապէս Ռուսաստանէն, Ռումանիայէն, ելն): Շատ մը զինուորներ չէին մկրտուած, ամենէն թէժ ժամանակ տեղի ունեցան մկրտութիւններ, զինուորներու պահանջքով: Հոգեւորականները շատ պահանջուած էին այդ ատեն: Զինուորները շատ աւելի կարգապահ էին երբ գնդերէցները իրենց հետ էին: Կը զիտակցէին որ Աստուած իրենց հետ էր եւ կը դառնային աւելի հանդարտ: Պատերազմին գնդերէցներ զոհուեցան: Անոնցմէ մին՝ Հայր Մկրտիչը, անհետ կորածներու ցանկին մէջ է:

Եռաբլուրի մէջ ալ գնդերէցները կը ծառայեն, արարողութիւններ կը կատարեն, հոգեհանգիստներ, մանաւանդ նեցուկ կը կանգնին եւ կը մխիթարեն զոհուածներու ծնողներն ու պարագաները:

Շրագիր

- Բոլոր համազգեստներուն վրայ Աշոտ Երկաթի կրծքանշանակները կան եւ անոնց մաս կը կազմեն:
- Զօրաց Վանքի նմանող բաց խորան եկեղեցիներ կան եւ կը կառուցուին: Այս վանքը Օրբելեաններու շրջանին կառուցուած է, 1303 թիւին: Զինուորները իրենց ձիերուն վրայ հեծած հաղորդութիւն կը ստանային եւ կ'երթային պատերազմի դաշտ: Վանքի վերանորոգման աշխատանքները սկսած են զայն վերածելու համար բանակային սրբատեղիի եւ ուխտատեղիի: Բնականաբար կը դառնայ նաեւ զբօսաշրջիկային հետաքրքրութեանց վայր:
- Կարգապահութեան ծրագիր: Հոգեբանական եւ դաստիարակչական ծրագիրներու մշակում եւ գործադրութիւն: Ծխելու, թմրամիջոցներու, ալքոլի գործածութեան, բռնութեանց, վատ արարքներու առաջը առնելու եւ բուժելու դասընթացներու կազմակերպում:



- Արդիւնաւէտութեան բարձրացման համար գնդերէցները կ'անցնեն վերապատրաստում: Բանակի Հոգևոր Առաջնորդութեան կ'օգնեն «Կլոր Սեդան Հիմանդրամ»ը եւ Հայաստանի Աստուածաշունչի Ընկերութիւնը
- Անընդհատ գնդերէցները կ'աշխատին վիրաւոր, հիւանդ զինուորներու, որդեկորոյս ծնողներու, հոգեբանօրէն ընկճուած անձերու հետ: Այս խիստ կարեւոր ծրագիր է Առաջնորդութեան համար:

Բոլոր բարձրաստիճան սպաները կը զգան պահանջքը գնդերէցներու ծառայութեան եւ լուրջ ակնկալիքներ ունին հոգևորականներէն:

Բնականաբար անկարգապահութիւններ կը պատահին բանակայիններուն մօտ, միատարր չեն զինուորները, զինճառայութիւնը պարտադիր է, հետեւաբար տարիքը երբ գայ Հայաստանի քաղաքացի ծառայութեան պիտի երթայ, ուրեմն զանազան խաւերէ եւ շրջանակներէ են զինուորները: Արեւմտեան երկիրներու մէջ զինուորը կը գատուի եւ դասընթացքներու կը հետեւի եւ յաջողութեան պարագային կը մտնէ բանակ: Մենք կարգապահութեան մեծ կարեւորութիւն կու տանք: Յաճախ դէմ յանդիման կը գտնուինք փողոցային տրամադրութիւններու եւ մտածելակերպի: Այսպիսիները մինչեւ ընտելանան՝ ժամանակ կը պահանջեն եւ մինչ այդ կրնան լուրջ հարցեր ստեղծել: Երբեմն ընտանիքի սխալ կառուցուածքի պատճառով զինուորներ իրենց հոգեկան հարցերու լուծման համար կը դիմեն ապօրինի միջոցներու (բազմամուլութիւն, ալքոլ, թմրեցուցիչ եւլն), տեղի կ'ունենան բախումներ եւ կռիւներ: Գնդերէցներու շնորհիւ կարելի կը դառնայ բանակին մէջ կանխել տասնեակ բանակայիններու ինքնասպանութեան արարքները: Մտերմիկ խօսակցութիւն, աղօթքներ, դասընթացքներ ետ կը պահեն զինուորը վատ քայլերէն: Հայր սուրբը բացատրեց որ ըստ ՀՀ սահմանադրութեան, գնդերէցները սպայութեան կարգի չեն կրնար հասնիլ, այդ վերապահուած է միայն զինուորներուն: Մակայն հարցը քննութեան մէջ է:

Ինչ կը վերաբերի իզական սեռի մասնակցութեան, անոնք քիչ են բայց վերջին տարիներուն կը խրախուսուին, կը զբաղին ընդհանրապէս գրասենեկային, կապի, բժշկական, սաւառնագիտութեան (aviation) աշխատանքներով: Վերջերս բանակը ունի կին սպաներ եւ հրամանատարներ: Միւս կողմէն, շատ մը զինուորականներու կիները իրենց ամուսիններուն կողքին կը ծառայեն բանակին մէջ, ինչ որ կը նպաստէ արու զինուորներու կարգապահ վերաբերման: Կին գնդերէցներ չկան:

Թէ ինչպէս կ'ընտրուին գնդերէցները, Հայր սուրբը բացատրեց թէ Վեհափառի օրհնութեամբ կը նշանակուին թեկնածուները, որոնց անուանացանկը կ'ուղարկուի ՊՆ, առ ի վաւերացում: Առաջնորդը կ'որոշէ թէ որ գնդերէցը ուր պիտի ծառայէ կամ կը կատարուի վիճակաձգութիւն:

Ինչ կը վերաբերի ոչ հաւատացեալ զինուորներուն, անոնց չի պարտադրուիր խաչ կրելը կամ Նոր Կտակարան շալկելը: Նոյնիսկ Քրիստոնէայի կատարած աղօթքները, օրինակ Հայր Մերը, չեն պարտադրուիր: Մակայն փաստն այն է որ ամենէն տարբեր կրօնական թեքում ունեցող զինուորին ամենէն մօտիկ անձը գնդերէցն է, յատկապէս փոքրամասնութիւն կազմող ազգերու զինուորներուն համար ինչպէս Եզրիտի, Ռուս կամ այլ: Երբ տարբեր կրօնի կամ դաւանանքի զինուոր մը ուզէ Հայ Առաքելական դառնալ, մկրտուիլ, մենք գրաւոր դիմում կը պահանջենք իր ծնողքէն, հոգևոր հովիւէն եւ միայն անոնց հաւանութենէն ետք է որ կը մկրտենք, բացատրեց Հայր Սուրբը:

Վերի տեղեկատուութեան մէջ ներառուած են Հայր Սուրբին պատասխանները իրեն ուղղուած բազում հարցումներուն:



Գնդերէցների ծառայության արդյունավետության բարձրացման համար մեծադեմ կարևորում ենք հեռ. վերապատրաստման զուգընթացների կազմակերպումը:



Ըր սիրունիկ համար ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի կրօնաբանական հետազոտ. արժանացավ մարտական խաչ 1-ին աստիճանի դասով բարձր ցուցանանք:

Հանդիսավարը, յիսունի հասնող մասնակիցներուն անունով շնորհակալություն յայտնեց դասախօս Հայր Սուրբին, որ մասնակիցներուն տուաւ մանրամասն տեղեկություն բանակի հոգեւոր առաջնորդութեան մասին, նիւթ մը որ բոլորովին անձանօթ էր բոլորին համար: Դասախօսութիւնը արձանագրուած է, որուն յղումը ստանալու համար դիմել գրելով diocese@armenian.com.au իմէյլի հասցէին:

Իր սրտի խօսքին մէջ Սրբազան հայրը շեշտեց որ Հայ եկեղեցին միշտ իր բանակին կողքին եղած է իսկ հիմա անհրաժեշտութիւնը մեծ է, մարտահրաւերները՝ շատ մեծ: Գնդերեցներուն պաշտօնը բանակին բարոյականը բարձրացնելն է եւ բարոյական արժէքներու այնտեղ պահպանումը, որ հսկայ աշխատանքի, նուիրուածութեան եւ ծրագրումի կը կարօտի: Սրբազանը գերզնահատեց Հայր Մովսէսին տարած հսկայ աշխատանքը ինչպէս նաեւ իւրաքանչիւր գնդերեցի եւ աւագ գնդերեցի: «Անոնք ոգի է որ կը ներշնչեն բանակին, բան մը որ զենքի չափ անհրաժեշտ է», եզրափակեց Սրբազան հայրը:

Մէկուկէս ժամ տեւող ձեռնարկը փակուեցաւ Հայր Մովսէսի աղօթքով:



Եշ., 30 Մարտ – Սրբազան հայրը մեկնեցաւ Կալկաթա, Հնդկաստան, որպէս Հայրապետական Պատուիրակ Հնդկաստանի եւ Ծայրագոյն Արեւելքի երկիրներուն: Ան Ծաղկազարդի պատարագ պիտի մատուցանէ Կալկաթայի մէջ եւ պիտի հանդիպի Մարդասիրական Ճեմարանի սաներուն եւ դպրոցի պատասխանատուներուն հետ: Յաւելեալ բացատրութիւն այս այցին մասին՝ Փարոսի Ապրիլի թիւով:



Ապաքինման Մաղթանք

Փարոսի խմբագրութիւնը բարի ապաքինում կը մաղթէ Բարեշնորհ Սարգիս Սարկաւագ Մանուկեանին, որ Մարտ ամսուան ընթացքին վիրահատման ենթարկուեցաւ եւ հիմա ապաքինման շրջանը կ'անցնէ:

Սարգիս Սարկաւագ երիտասարդ օրերէն մինչեւ օրս ծառայած է Հայ եկեղեցւոյ: Վերջին տարիներուն ան նաեւ վարեց Առաջնորդարանի քարտուղարութեան պաշտօնը:

Խմբագրութիւնս կու գայ սիրելի Սարգիս Սարկաւագին մաղթելու կատարեալ առողջութիւն: Մեր աղօթքն է որ Բարձրեալն Աստուած զայն զօրացնէ եւ անոր պարգևէ համբերութիւն եւ արեւշատ օրեր:

Get Well Wishes

Paros editorial extends best wishes to *Deacon Sarkis Manoukian* who recently underwent major surgery and is now on the path of recuperation.

Deacon Sarkis has been a servant of the Armenian Apostolic Church since his youth and in more recent years took on the role of the Diocese's Secretary.

We wish Deacon Sarkis a full recovery to improved health and pray to the Almighty Father to grant him all the strength and patience needed.

Լուրեր Ծովխերէն

Ուէնուըրթօվիլ - ՄԻՏՆԻ Սուրբ Երրորդութիւն Եկեղեցի

Չորեքշաբթի, 1 Մարտի առաւօտեան Արժ. Ս. Միւռոն Քհնյ. Աւետիսեան Արեւազալի ժամերգութիւն կատարեց:

Ուրբաթ, 3 Մարտի առաւօտեան, եկեղեցոյ «Պաթմանեան» սրահէն ներս հիւրընկալուեցաւ Միտնի նահանգի Խորհրդարանի հայասեր անդամ Hugh McDermottը, ներկայութեամբ Թեմիս բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Ս. Հայկազուն Արք. Նաճարեանի, Հոգևոր Հովիւ Միւռոն Քհնյ. Աւետիսեանի, Թեմական Խորհուրդի ներկայացուցիչներ Տիարք Մարգիս Տէր Պետրոսեանի եւ Ստեփան Գրգաշարեանի, Բարեկեցութեան Կեդրոնի պատասխանատու Տիկին Զեփիւռ Սուրատեանի, Ծխական Խորհուրդի ատենապետ Տիկ. Լալա Կարապետեանի եւ անդամներու, սիրելի տարեցներու եւ կամաւորներու: Ընթացքին խօսք առին Պրն. Գրգեաշարեանը, Ս. Միւռոնը, Առաջնորդ Սրբազան Հայրը եւ օրուան հիւրը: Բոլորն ալ ուրախութեամբ ողջունեցին նախաձեռնութիւնը, արժարձուեցան Արեւմտեան Միտնիի հայութեան բարգաւաճման համատեղ դիմագրաւած մարտահրաւերները, գալիք ծրագիրներն ու տարուած աշխատանքները, ինչպէս նաեւ ընդհանրապէս հայութեան կապակցաբար խնդիրները: Ապա, սեղանակից դարձան եւ արգասաբեր զրոյց ունեցան, որոնց արդիւնքները իրականացման հետ կը բացայայտենք:



Իսկ երեկոյեան Արժ. Ս. Միւռոն Քհնյ. Աւետիսեանը վարեց հսկումի արարողութիւնը եկեղեցիէն ներս:

Կիրակի, 5 Մարտին նշուեցաւ «Անառակի Կիրակին», իսկ յաւարտ Ս. Պատարագի, 14 նոր



աշտանակներու եւ տրցակ մը ճերմակ գլխաշորերու, ինչպէս նաեւ յիշեալ սպասներու նուիրատուներու՝ Տէր եւ Տիկ. Հրայր եւ Անի Պետրոսեաններու օրհնութիւնը կատարուեցաւ: Հոգևոր Հովիւը փոխանցեց իր շնորհակալութիւնն ու բարեմաղթութիւնը եւ երկնային պարգէներով շնորհազարդուած մնալու աղօթք վերառաքեց Աստուծոյ: Սոյն օրը Ծխական Խորհուրդին կողմէ կազմակերպուած էր «Ֆալաֆելի» ճաշկերոյթ, «Պաթմանեան» սրահէն ներս, որուն հասոյթը փոխանցուեցաւ Սուրիահայութեան օգնութեան ֆոնտին:

Կիրակի, 12 Մարտին, «Տնտեսի Կիրակի»ի Արեւազալի ժամերգութիւնը կատարեց Արժ. Ս. Պարթեւ Աւագ Քհնյ. Գարագաշեան:

Կիրակի, 19 Մարտ, «Դատաստանի Կիրակի»ի Արեւազալի ժամերգութիւնը դարձեալ կատարեց Արժ. Ս. Միւռոն Քհնյ. Աւետիսեանը: Պատարագէն ետք Տիկնանց յանձնախումբ «Միջինքի» առիթով հրաւիրած էր ներկաները, միասնաբար «Պաթմանեան» սրահէն ներս ճաշելու «Ոսպով քէոֆթա», ուր նաեւ Տիկ. Մարիա Թաշճեանը փոխանցեց Միջինքի խորհուրդը, յորդորելով ներկաները, մաքուր պահել հոգիի

սենեակները, որպեսզի Յիսուս բնակի այնտեղ, ապա աւանդական Գաթան հիւրասիրուեցաւ ներկաներուն, որուն մէջ պահուած էր մետաղեայ դրամ, որու որ ան բաժին իյնար՝ կը համարուէր տարուան յաջողակ անձը:

Ուրբաթ, 24 Մարտի երեկոյեան Արժ. Տ. Միւռն քինյ. Աւետիսեանը կատարեց հսկումի արարողութիւնը:

Կիրակի, 26 Մարտ «Գալստեան Կիրակի»ի Արեւագալի ժամերգութիւնը կատարեց եւ Պատարագը մատուցեց Արժ. Տ. Միւռն քինյ. Աւետիսեանը:

Չորեքշաբթի, 29 Մարտի առաւօտեան Արժ. Տ. Միւռն քինյ. Աւետիսեան կատարեց Արեւագալի ժամերգութիւնը:

Մարիա Թաշճեան Թոգմաքճեան

ՆՈՐ ՉԵԼԱՆՏԱ

Օքլանտի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցույ Ծիսական Խորհուրդին հրաւերին ընդառաջելով, Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեան Սպրիլ 14-ին պիտի այցելէ Օքլանտ, 15 Սպրիլին Զատկուան Պատարագ մատուցելու համար Թաքսիփունայի Ս. Պետրոս Անկլիքան եկեղեցույ մէջ: Սրբազան հօր պիտի ընկերակցի Բարեշնորհ Վարդան Սարկաւագ Էլմասեանը: Այս առիթով, Զուարթնոց երգչախումբի դպրոնիները սկսան իրենց փորձերուն, ի պատրաստութիւն Պատարագին:

Մայիս 26-ին տեղի պիտի ունենայ Քրիստոնէական Միութեան համար Աղօթքի Շաբաթը (The Week of Prayer for Christian Unity): Կազմակերպիչ յանձնախումբը, որուն մաս կը կազմէ Նշան Սարկաւագ



Պասմաճեան, 22 Մարտին ունեցաւ իր վերջին դէմ առ դէմ ժողովը յստակացնելու համար օրուան ծրագիրը եւ բաժնելու աղօթքները, որոնք պիտի ընթերցուին Քրիստոնէայ զանազան համայնքներու ներկայացուցիչներուն կողմէ: Այս տարի հիւրընկալ եկեղեցին պիտի ըլլայ Թաքսիփունայի Մեթոտիսթ Եկեղեցույ հոգեւոր հովիւ Փիթըր Նօրմըն Քահանան: Եկեղեցույ տարողութիւնն է 200 հաւատացեալ: Ժողովին կը մասնակցէին Համաշխարհային Մեթոտիսթ եկեղեցույ Էքիմենիք Գործունէութեան ընդհանուր տնօրէն

Թոնի Տրանքլին Ըոս Քահանան, Փիթըր Նօրմըն քահանան, Ժան Փօլ Ապու Նաում Մէլքայթ վարդապետը, Հնդիկ Յակոբիկեան (Jacobite) եկեղեցույ հովիւ Դոկտ Ճոզէֆ Քահանայ Մարամբանտամն ու Երեկիներ եւ Օքլանտի Կաթոլիկ եկեղեցույ եկեղեցապետին ներկայացուցիչ Տիկին Լուիզա Բանին, եւ Նշան Սարկաւագ: Բանաւոր պատճառով կը բացակայէին Փրեսպիթիերն, Քաղդէական եւ Անկլիքան եկեղեցիներու ներկայացուցիչները:

Ժողովի աւարտին, որոշուեցաւ որ 2024-ի ձեռնարկի կազմակերպող եկեղեցիները ըլլան Մէլքայթ Կաթոլիկ եւ Հայ Առաքելական եկեղեցիները:

Ամէն տարի, Մէտոուուտի Համայնքային Տան վարչութիւնը Մշակութային Օր կը կազմակերպէր Համայնքային Տունը գործածող ազգային զանազան համայնքներու միջոցաւ: Այդ նպատակով մասնակիցները կը ցուցադրէին իրենց ազգագրական տարազները, կերակուրները, երգն ու պարը: Ի միջի այլ համայնքներու, Հայ համայնքն ալ կը մասնակցէր, ի դէմս Նոր



Զեյանտայի Հայկական Միութեան: Երեք տարի է ի վեր, Քովիտի պատճառով, այս ձեռնարկն այլ կանգ առած էր: Այս տարի այս աշխատանքը վերսկսաւ, թէեւ մետասաներորդ ժամուն: Թուական՝ Շաբաթ 25 Մարտ: Քիչ թիւով համայնքներ մասնակցեցան (Ռուս, Ուքրանացի, Եգիպտացի) եւ Հայ համայնքը: Խումբ մը Հայ տիկիններ ցուցադրեցին հայկական կերակուրներ: Յուսով ենք որ յառաջիկային, ձեռնարկը կը վերագտնէ իր աշխուժութիւնը եւ հնարաւոր կը դառնայ ներկայացնելու հայկական ֆուլբորը:

Թղթակից



Հայ Համայնքի Բարեկեցութեան Կեդրոն

Մարտի սկիզբը, Հայ Համայնքի Բարեկեցութեան Կեդրոնի (ՀՀԲԿ) տնօրէնուհի Տիկին Զեփիւ Մուրատեան մասնակցեցաւ NSW Women's Contribution Awards 2023-ին:

Նիւ Սաութ Ուելզ նահանգէն ընտրուեցան 15 անձեր, որոնք մեծ ջատագովներ հանդիսացած են 4 բնագաւառներու մէջ. կիներու առողջապահութիւն, ճկունութիւն, հեղինակութիւն եւ պատեհութիւն:

Առաջին միջոցառումը կազմակերպուած էր Resilience Together Association-ի կողմէ, Կիներու Միջազգային Տոնին առթիւ, ուր լուսարձակի տակ կ'անուրէր կիներու կողմէ տարուած աշխատանքը մշակութային եւ լեզուական տարբեր ակունքներու հաւաքականութեանց մէջ: Տիկին Զեփիւ Մուրատեան տիրացաւ 2023 տարուան առաջին մրցանակին Advancing Women's Opportunity բնագաւառին մէջ: Անոր աշխատանքը գնահատուեցաւ իր տարած բացառիկ աշխատանքին համար յօգուտ Հայ Համայնքին: Ան պարգևատրուեցաւ Ուիլուպի քաղաքապետուհի Թանիա Թէյլրի, Մառա Լինի (նախագահ Resilience Together Association)-ի, Ճոզէֆին Լամի (նախագահ Australia Fujian Association-ի միւլտիմիտալ ստեն նախագահ Australia National Education Group)-ի, եւ Haymarket Chamber of Commerce Association-ի նախագահ Վինսընթ Լիմի կողմէ:



Յայտնենք որ վերջին 10 տարիներու ընթացքին, Տիկին Մուրատեան, օգտակար հանդիսացած է հարիւրաւոր ներգաղթողներու, կիներու եւ ապաստանեալներու, ապահովելով անոնց համար աշխատանք, զանոնք վերապատրաստելով եւ դառնալով անոնց խորհրդատուն: Տիկին Զեփիւ Մուրատեան զօրաւոր եւ անկախ նկարագրի տէր օրինակելի անձնաւորութիւն է եւ ներշնչման աղբիւր շատ մը կիներու: Ան ճանչցուած է որպէս խնամատար անձնաւորութիւն եւ միշտ յառաջ տարած է կիներու յառաջընթացին եւ զարգացման ի նպաստ առիթներ ստեղծելու աշխատանքը:

Փարոսի խմբագրութիւնը կը շնորհաւորէ Տիկին Զեփիւ Մուրատեանի պարգևատրումը իր տարած անգուզական աշխատանքին համար:

10 Մարտին ՀՀԲԿէն Տիկնայք Մարինա Աւագեան-Չափրագեան, Զեփիւ Մուրատեան եւ Երեցկին Յասմիկ Համբարձումեան հրաւիրուած էին Նորթ Սիտնիի խորհրդարանական ներկայացուցիչ Տիկ. Քէյլա Թինքի կողմէ մասնակցելու նախաձեռնած մը Քիրիպիլիի մէջ, Միջազգային Կանանց Տոնին առիթով: Տիկին Թինքի պատգամն է. « Պէտք է գտնել երկարժամկետ լուծումներ կիներուն գործնապէս զօրակցելու կեանքի տարբեր հանգրուաններուն, դպրոցէ մինչեւ աշխատատեղի»: 200-է աւելի ներկաները առիթ ունեցան լսելու եւ ըմբռնելու 4 դասախօսներուն պատգամները:

Առողջապահութեան նախարարութիւնը յաւելեալ նպաստ շնորհեց ՀՀԲԿ-ին ի ծառայութիւն 65 տարիքէն վեր երեցներուն երթելեկի, հանգիստի եւ կերակուրներու հայթայթման մարզերէն ներս:



ԼՈՒՐԵՐ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԵՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎԸ

Փետրուար 28-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահութեամբ, սկսաւ Գերագոյն հոգեւոր խորհուրդի ժողովը, որ աւարտեցաւ 3 Մարտին:

Նորին Սրբութիւնը ողջունեց նաեւ ԳՀԽ կազմում ընդգրկուած նոր անդամներ Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Միքայէլ արքեպիսկոպոս Աջապահեանը, Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Արմաշ եպիսկոպոս Նալբանդեանը, Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեանը, Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Յովնան եպիսկոպոս Յակոբեանը, ԱՄՆ Հայոց Արեւելեան թեմի Առաջնորդ Հոգեշնորհ Ս. Մեսրոպ վարդապետ Պարսամեանը եւ Տիար Հայկ Իգնաթեանը:



Օրակարգը կ'ընդգրկէր, Եկեղեցա-վարչական, կանոնական, կարգապահական, հայեցակարգային եւ Եկեղեցոյ առաքելութեան արդիւնաւորմանն առնչուած հարցեր:

Նիստերուն առեւնապետեց Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական պատուիրակ Ս. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանը:

Հայաստանի եւ Արցախի մէջ 44-օրեայ պատերազմին հետեւանքով ստեղծուած կացութեան եւ առկա մարտահրաւերներուն մասին զեկուցեց ԳՀԽ անդամ, Գեորգ Դանիէլեանը: Ան անդրադարձաւ երկրի շուրջ ընթացող աշխարհաքաղաքական զարգացումներուն, մասնաւորաբար անվտանգային մարտահրաւերներուն:

Անդրադառնալով Արցախի հիմնախնդրին՝ ԳՀԽ-ը արձանագրեց, որ Արցախի ժողովուրդի անվտանգութեան երաշխիքն Արցախի անկախութեան ճանաչումն է՝ ելակէտ ունենալով ազգերու ինքնորոշման հիմնարար սկզբունքը: Այս առնչութեամբ կարեւոր նկատուեցաւ համազգային համընդհանուր ջանքերու միաւորումը, միջազգային հանրութեան ամենալայն շրջանակներու աջակցութեան ապահովումը եւ մասնաւորաբար այդ ուղղութեամբ Եկեղեցոյ կողմէն իրականացուող աշխատանքներու առաւել ընդլայնումը:

Լուսարարապետ Ս. Մուշեղ եպիսկոպոս Բաբայեանը ժողովականները զեկուցեց Մայր Տաճարի հիմնանորոգութեան եւ ամրակայման աշխատանքներուն մասին: Ծանուցուեց, որ Մայր Տաճարի ներքին յարդարման, որմնանկարներու վերականգման, օղավոխութեան համակարգի տեղադրման եւ արտաքին բարեկարգման աշխատանքներու աւարտը կը նախատեսուի Սեպտեմբերին:

Մայր Տաճարի վերածման, Միւռնօրհնութեան, եպիսկոպոսաց ձեռնադրութեան եւ յարակից միջոցառումներու կազմակերպման վերաբերեալ զեկուցեց դիւանապետ Ս. Արշակ արքեպիսկոպոս Խաչատրեանը: Սրբազան Հայրը յայտնեց, որ արարողութիւններն ու միջոցառումները յաւուր պատշաճի կազմակերպելու համար կազմուած են յանձնախմբեր, որոնք կը համակարգեն ծիսական,

կազմակերպելու համար կազմուած են յանձնախմբեր, որոնք կը համակարգեն ծիսական, արարողակարգային, հրատարակչական, քարոզչական եւ տեղեկատուական աշխատանքները:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը գոհունակութեամբ ընդունեց ներկայացուած տեղեկութիւնը եւ ծրագրեց Մայր Տաճարի վերածման ու Միւռնօրհնութեան արարողութիւնները եւ յարակից միջոցառումները կազմակերպել Սեպտեմբերի 30-էն Հոկտեմբեր 3, իսկ եպիսկոպոսական ձեռնադրութիւնը՝ Հոկտեմբեր 8-ին:

Մայր Աթոռի Արտաքին յարաբերութիւններու եւ արարողակարգի բաժնի տնօրէն Տ. Նաթան արքեպիսկոպոս Յովհաննիսեան ժողովականներուն ներկայացրեց Սուրբ Ներսէս Շնորհալի Հայրապետի վախճանման 850-րդ տարելիցին նուիրուած տօնակատարութիւններուն համար նախատեսուած հոգեւոր, կրթական, մշակութային միջոցառումներու ծրագիրը: Որոշուեցաւ նաեւ, Մարտ 5-ին, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցիներուն մէջ ընթերցել Սուրբ Ներսէս Շնորհալի Հայրապետի 850-րդ տարելիցին նուիրուած Հայրապետական Կոնդակը:



Նաթան Սրբազանը տեղեկացրեց, որ ի նշանաւորումն Երանաշնորհ Հայրապետի վախճանման 850-րդ տարելիցին՝ Դեկտեմբերին, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ Հռոմի Կաթոլիկ եկեղեցին Վատիկանի մէջ կը կազմակերպեն համատեղ միջոցառումներ:

Սրբազան Հայրը նշեց նաեւ, որ Սուրբ Ներսէս Շնորհալի յիշատակի օրը ԵՌԻՆԵՄԿՕ -ն եւս ներառած է յատուկ նշուող տօներու շարքին մէջ:

Ժողովականները ծանօթացան նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2022 թուականի գործունէութեան տեղեկագրին: Արձանագրուեցաւ, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցականներու ընդհանուր թիւը 721 է՝ 49 արքեպիսկոպոս եւ եպիսկոպոս, 72 կուսակրօն քահանայ (ծայրագոյն վարդապետ, վարդապետ եւ արեղայ), 504 քահանայ, 96 սարկաւազ: Անցնող տարուան մէջ իրականացած են տարբեր հոգեւոր-քարոզչական, կրթական, մշակութային ծրագրեր՝ ՀՀ Զինուած ուժերու, քրեակատարողական հիմնարկներու, կրթական ու մշակութային հաստատութիւններու եւ համայնքներու մէջ:

Կարեւորութեամբ անդրադարձ կատարուեցաւ 2022 թուականի ընթացքին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացուած ընկերային աջակցութեան եւ օժանդակութեան ծրագիրներուն: Յիշեալ ծրագիրները եղած են ի նպաստ գոհուած եւ վիրաւոր զինուորներու ընտանիքներու, պատերազմին հետեւանքով Արցախէն եւ սահմանամերձ բնակավայրերէն տեղահանուած ու ընկերային ծանր կացութեան մէջ գտնուող հայորդիներու:

Քառօրեայ ժողովի ընթացքին քննարկուեցան նաեւ Եկեղեցւոյ կանոնական ու հովուական կեանքին, կարգապահական ու իրաւական խնդիրներուն, կրթական ծրագրերուն եւ Եկեղեցւոյ առաքելութեան արդիւնաւորման վերաբերող հարցեր:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒԵՑԱԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ

Մարտ 5-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանութիւնը, Վեհափառ Հօր օրհնութեամբ, Սուրբ Գայանէ վանքին մէջ մասնակցեցաւ Սուրբ Պատարագի սրբազան արարողութեան, որու ընթացքին հրապարակուեցաւ Ամենեան Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակը՝ նուիրուած Սուրբ Ներսէս Շնորհալի Հայրապետի վախճանման 850-րդ տարելիցին:

Գերաշնորհ Տ. Վազգէն արքեպիսկոպոս Միրզախանեան խորան բարձրացուց հայրապետական կոնդակը, գոր ընթերցեց Մայր Աթոռի Վանորէից տեսուչ Գերաշնորհ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանեանը:

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ԿԱՍՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԻԿ ԷԶՄԻԱԾՆԻ
ՔՐԻՍՏՈՍԱԻԱՆԴ ՄԻՐՈՑ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԱՆՑ ՀԱՅՈՑ
ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՑ,
